ՆՈՐ-ԴԱՐ

№ 138 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հինգշաբթի, 7 Օգոստոսի. 1903 Հինգշաբթի, 7 Օգոստոսի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 138

Տարին 10 ռուբ. վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ.
ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., համար 5 կ.։ Բաժանորդ են
գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով.-փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից
մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով
Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

Կիրակի, օգոստոսի 10-ին, Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ, օրուայ ժամը 12-ին, կատարուելու է հանգիստ հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ յաւերժայիշատակ

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆԻ

համար, որի մասին այսու ծանուցանում է ի գիտութիւն հայ հասարակութեան ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

3—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Գիւղական քահանայ
Քրօնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Ղուբայից, Ղայաբաշուց։
Տ. Տ. Մելքիսեդեկ սրբազան։
Կ. Պօլսի հայ թերթերից։
Մամուլի շուրջը։
Ռոստովցևի սպանութեան առթիւ։
Քաղաքական.—Մակեդոնական ապըստամբութիւն։ Վերջին տեղեկութիւններ Մակեդոնական ապստամբութեան մասին։ Պիոս X-րդ Պապի ընտրութեան նախնթաց հանգամանքները։ Մակեդոնական ապստամբութեան պարագլուխները։
Էմբերների դատը։
«Նոր-Դար»-ի հեռագրները։
Բանասիրական.—Կեանք։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս 6-ին օգոստոսի 1903 թ.

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅ

Բազմաթիւ ու բազմատեսակ են այն պարտականութիւններն ու ծառայութիւնները, որոնք ծանրանում են գիւղական քահանայի ուսերի վրայ։ Եւ մի միջին կրթութիւն ստացած, իւր կոչման բարձր նշանակութիւնը ըմբռնող հայ քահանայ, որը միևնոյն ժամանակ կրում է իւր մէջ անձնանուիրութեան ոգի և հասարակութեան օգտակար դառնալու ձգտումն,—շատ բան կարող է անել հայ գիւղացու խաւարած կեանքի մէջ։

Ժողովրդին հասկանալի և գիւրամատչելի լեզուով արտասանած իւր կենդանի խօսքով ու քարոզներով ամբողջ գիւղը կարող է դարձնել մի ուսումնարան։ Խօսելու, բացատրելու համար նա իւր տրամադրութեան տակ ունի ընդարձակ ժամանակ, մանաւանդ ձմեռուայ 4—5 ամիսներում, ուր գիւղացի հասարակութիւնը դաշտային խիստ քիչ աշխատանք ունենալով, ամբողջ ժամանակը անցնում է գոմերում, մարագներում խմբեր կազմած՝ զրախօսութիւններով ու հարբեցողութեամբ։ Նա կարող է այդ ժամերը ամենաօգտաւէտ կերպով անցնել, հաւաքելով գիւղական հասարակութիւնը իւր շուրջը և խօսելով նրանից այլ և այլ բարոյական, միտքը լուսաւորող հոգին ազնուացնող նիւթերի և խնդիրների մասին։ Ազգային պատմութիւնը, նրա դաւանած եկեղեցու ծէսերը, հաւատալիքները, սովորութիւնները, անցեալ ժամանակի մէջ եկեղեցու ունեցած նշանաւոր եկեղեցականների կեանքն ու գործունէութիւնը, երկրագործութիւնը, անասնապահութիւնը և առհասարակ դաշտային աշխատանքները, և այլն, և այլն, քահանային տալիս են խօսելու, սովորեցնելու անսպառ նիւթ։

Քահանան իւր խօսքի ոյժով պէտք է մաքրէ ու հալածէ գիւղացու մէջ արմատացած վնասակար սովորութիւնները, ոխակալութիւն, քինախնդրութիւն, ծուլութիւն, և այլն, որոնք շատ-շատ դէպքերում բացի բարոյական վնասներից, նիւթական անփոխարինելի կորուստներ են պատճառում գիւղացուն։

Քահանայի բոլոր ջանքերը ուղղուած պէտք է լինեն դէպի այն, որ ժողովրդի մէջ զարգացնի գիտակցութիւն շրջապատող կեանքի պայմանների, պետական օրէնքների ու կարգադրութիւնների, գիւղական համայնքի վրայ դրուած հարկերի վերաբերութեամբ։

Եւ վերջապէս քահանայի անձնաւորութիւնը, նրա ընտանեկան կեանքը, իւր գիւղական աշխատանքների մէջ գործ դրած դիւրութիւններն ու նորութիւնները կծառայեն իբրև կենդանի օրինակ գիւղացի հասարակութեան համար, ուրեմն, որքան նա իւր մասնաւոր կեանքով բարձր կանգնած լինի իրեն շրջապատող ժողովրդից, այնքան նրա ազդեցութիւնը զօրեղ կլինի վերջինիս ամբողջ կեանքի ընթացքի վրայ։

Սակայն, ցաւալի է, թէ ներկայումս մեր գիւղական քահանայական դասի քանի՛ երրորդական մասն է համապատասխան այդ պահանջներին և կարող այդպիսի մի ծանր լուծ տանելու։ Այդ հարցի պատասխանը, դժբաղդաբար, շատ յուսահատեցուցիչ է, որովհետև այդ տեսակ քահանաներ կամ ամենևին չունենք, և կամ եթէ կան էլ—չափազանց սահմանափակ է այդպիսիների թիւը։

Գործունեայ և ժողովրդի ցաւերին կարեկցող քահանաների պահանջը ամեն ժամանակ զգացուել է, սակայն, ներկայ պայմանների տակ այդ պահանջը կրկնապատիկ, քառապատիկ կարևորութիւն է ստացել, այն բազմաթիւ վտանգների պատճառով, որոնցով շրջապատուած է գիւղական հասարակութիւնը։ Նա կարօտ է բարոյական հզօր պաշտպանութեան անձը իւր հօտի վրայ դնող առաջնորդ-քահանաների, որոնք կարող լինեն նրան պահպանել կեանքի փոթորկոտ ալիքների դէմ...

Միակ անձնաւորութիւնը, որը կարող է գիւղական հասարակութիւնը ազատել վերահաս վտանգներից և կանգնեցնել կեանքի ուղիղ ճանապարհի վրայ,—այդ գիւղական կրթուած, անձնուէր, պարտաճանաչ, իւր ուխտին հաւատարիմ և սրտացաւ քահանան պէտք է լինի։

Եթէ մինչև այժմ առանձին ուշադրութիւն չէ դարձուած գեղջկական հովիւների ընտրութեան վրայ, հարկ կայ այսուհետև մանրակրկիտ ընտրութիւն կատարել, պէտք է կոչել այդ պաշտօնին միմիայն նրանց, որոնք արժանի են և գլխաւորը՝ կատարելապէս վստահելի։

Մեծ է գիւղական քահանայի դերը ամեն տեսակէտից։

Օգոստոսի 1-ից բաժանորդ են գրւում և վճարում են 5 ր. 25 կ.,

ՔՐՕՆԻԿՕՆ

Վեհափառ Հայրապետի հրամանով թեմական բոլոր առաջնորդները ներկայումս հաւաքւում են Ս. Էջմիածին։

—Ինչպէս մեզ հաղորդում են Բեսարաբիայի թեմ. ս. առաջնորդը ակարութեան պատճառով չի կարողանում ս. Էջմիածին մեկնել։ Ցանկանք նրան առողջութիւն։

—Օգոստոսի լոյս 4-ի գիշերը անդր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔ

(Թարգմանութիւն ռուսերէնից *)

— Ոչ, չեմ կարողանում... Այս անիծեալ աչքերը ինձ բոլորովին չեն յաջողւում։

Եւ Բարոզզինը բարկութեամբ գցեց վրձինը արհեստանոցի մի անկիւնը, վայր ձգեց դեզակալը և խոնջացած մարմնով ձգուեց բազկաթոռի վրայ յետը դէպի պատկերակալն արած։ Իւր գանգրահեր և տեղ-տեղ էլ սպիտակած գլուխը հենելով ձախ ձեռքի վրայ, նա աննպատակ նայում էր պատուհանից և ծխում։

Եղանակը գարնանային էր և խաւարը հետզհետէ տիրապետում էր փողոցներում։ Ձիւնի մանր փաթիլները գարնանային դեռևս ցուրտ և միևնոյն ժամանակ խոնաւ մթնոլորտում խառնւում էին միմեանց, և նրանց կար ծես թէ հաճելի չէր ընկնել գետին որտեղ մարդկային ոտքը պիտի խառնէր նրանց ցեխի հետ։ Այդ հինգյարկանի ճակատազարդ շինութեան ամենավերջին յարկից, որտեղ գտնւում էր Բարոզզինի արհեստանոցը, յայտնւում և չքանում էին նրա աչքերից գարնանային ցրտից և խոնաւութիւնից կծկուած մարդկային ուրուականներ. և եթէ նրանց հանած ձայները չլսուէին, կարելի էր նմանեցնել նրանց շարժուն ստուերների, որոնք աշխատում էին մի կերպ դուրս պրծնել իրենց շրջապատող խաւարից։

— Միթէ ինձ չպիտի յաջողուի ստեղծել աչքերի մի այդպիսի արտայայտութիւն—յուսահատութեամբ հարցրեց Բարոզզինը ինքն իրեն։—Այո, ինչպէս ստեղծել, որովհետև բնութեան մէջ գուցէ և գոյութիւն չունի այդպիսի մի «բարդ» հայուածք։

Բարոզզինը ակամայից դարձաւ դէպի պատկերակալը և սկսեց հետաքրքրութեամբ նայել իւր նկարին։

— Այո, դա շատ հետաքրքիր կերպով մտածուած է անկասկած,—մտածում էր Բարոզզինը, մեծ գոհունակութեամբ հրճուելով իւր արտադրութեան վրայ։—Միթէ յետևի կողմից քիչ լուսաւորուած մութ ֆոնը չէ կազմում կեանքի գաղտնիքի պերճախօս սիմբոլը, որը հետզհետէ պարզւում է մեր դէմ։ Իսկ կեանքի պատկերը... Չէ՞ որ կանացի այդ երիտասարդ, ամրակազմ և գեղեցիկ մարմինը գոյութիւն ունի. չէ՞ որ դա է հէնց իսկ և իսկ շարժումը, որին ձգտում են ամենքը... Այո, շատ լաւ... Եւ ուղիղ է, որ կեանքը ոչ մի ժամանակ չէ վրդովւում մահուան իւր ետևից նայելու պատճառով... Կեանքը ամբողջ մարմնով կանգնած է նրա դէմ և փոքրը ինչ թեքուած, որպէսզի չտեսնի նրա ահռելի երեսը, փայփայող աչքերը և գողացող ատամները։ Կարծէք թէ կեանքը չէ զգում մահուան սոսկալի ձեռքերի ոչ ծանրութիւնը և ոչ էլ սառնութիւնը, որոնք կպած են նրա ուսերին. չէ լսում նաև այն փըսփըսուկը, որ փսփսում է մահը նրա ականջին բոլոր կենդանի արարածների վախճանի մասին. բայց կարծէք թէ կեանքը քմծիծաղ տալով ասում լինի՝

—Հն, ինչ անենք, եթէ բոլոր կենդանի արարածները գտնւում են քոխլանութեան տակ։ Թէև իմ խարոյկից հանգչում են առանձին-առանձին կայծեր, բայց ամբողջ խարոյկը միշտ վառ է, չի՛ հանգչիլ։ Նայի՛ր, միևնոյն պայծառութեամբ չէ՞ վառւում արդեօք, ինչպէս որ էր հազարաւոր տարիներ սրանից առաջ. միթէ նրա միջի կրակը չի բաւիլ նորից հազարաւոր տարիներ։ Չէ՞ որ բոլոր շարժմանց բնական նպատակը մահն ու հանգստութիւնն են։ Իմ կայծը, որը փոխւում է մի ամբողջ վառվռուն բոցի և որը պատճառ է դառնում տասնեակ հայծերի յառաջ գալուն, արդէն իւր գործը վերջացրել է. նա հանգչում է հանգիստ և առանց տանջուելու. ինչու համար, որովհետև յոյս ունի որ, իրենից ծնուած միւս տասնեակ կայծերը պիտի շարունակեն պահպանել իրենց գոյութիւնը։

— Այո, այդ արտայայտութիւնն ես յաջող է,—ամփոփեց իւր մտքերը Բարոզզինը մեծ բաւականութիւն զգալով։—Եւ մանաւանդ կեանքի ոտների մօտ վառուող այդ խարոյկը շատ տպաւորիչ է։ Նա միապաղաղ լուսաւորում է ամբողջ նկարը. նրա միջոցով նկարի շրջագիծն էլ համարեա ռելիեֆ է երևում և նա որպէս բարելեֆ երևան է գալիս մութ ֆոնի վրայ։ Այո, անկասկած, նկարը մի առանձին տպաւորութիւն պիտի թողնի... Բայց նրա գլխաւոր ոյժը պիտի կայանայ աչքերի մէջ։ Իմ նկարում, պիտի ասել, որ աչքերն են իմ իղձն, նրանց մէջ պիտի երևան կեանքի բոլոր գաղտնիքները. այնպէս պիտի գծել նրանց, որ տեսնողն ասի—«Այո, այդ աչքերից նայում է իսկ և իսկ կենդանի կեանքը, նրանց մէջ դուրս է բերուած այն բոլորը, ինչ որ կայ կեանքի մէջ»։

Բարոզզինը նորից-նոր սկսեց նայել կեանքի աչքերին, բայց այդ ևս չբաւականացրեց նրան։

Խաւարը հետզհետէ աւելի էր խտանում և լայն պատուհանից մտնում Բարոզզինի արհեստանոցը։ Բոլոր անկիւնները արդէն խաւարի իշխանութեան տակ էին գտնւում. լուսոյ փոքրիկ մոխրագոյն մի շերտ էր մնացել միայն պատուհանի դէմ և այդ շերտը ձգուելով վերջանում էր պատկերակալի յետևում իսկ ծխախոտի ծուխը ալիքաձև բարձրանալով շրջապատում էր պատկերակալը։

Ցանկարծ Բարոզզինին երևում է՝ իբրև թէ կեանքի նկարը աշխատում է ջոկուել կտաւից։ Այն ցնորքը, որ իւր նկարը կենդանանում է, մի անբացատրելի զուարճութիւն պատճառեց նրան, և նա նստած աշխատում էր անթարթ դիտել այդ երևոյթն ու զմայլուել։

Կեանքի համար կարծէք թէ շատ դժուար էր բաժանուել իրեն շրջապատող խաւար ֆոնից. բայց նա յանկարծ պոկուեց ֆոնից և օդի մէջ հանդարտ լողալով կանգնեց Բարոզզինի դիմաց։

— Աչքերդ... աչքերդ... ցոյց տուր տեսնեմ ինչպէս են քո աչքերը ասաց Բարոզզինը ուշադրութեամբ շեշտակի նրա աչքերի մէջ նայելով։

Կեանքը խնդաց։ Հեշտ չէր նրա աչքերի արտայայտութիւնն ըմբռնել. դա մի կենդանի, բայց վերին աստիճանի բարդ արտայայտութիւն էր։

—Ասա դու ինձ կեանք. ինչպէս կարող եմ ընդօրինակել աչքերդ, չէ՞ որ ամեն բան պիտի [illegible] քո նայուածքից. չէ՞ որ բոլորը քո մէջ միմեանց հականիշներ։ Դու զուարճութիւն ես և տանջանք. քո մէջ կայ՝ սէր, բայց միևնոյն ժամանակ ատելութիւն, ճշմարտութիւն և ստութիւն, բարութիւն և չարութիւն, գիտութիւն և տգիտութիւն, ուրախութիւն և տրտմութիւն... Ասա ինձ, ինչպէս ստեղծեմ այդ բոլորը. ասա ինձ, ինչու ես կապել մեզ այդ շղթաներով և ամբողջ դարեր պահում շղթայուած... Դու ծիծաղում ես... ինչի՞ վրայ Դու մեզ հետ խօսում ես հանելուկներով, և երբ որ չենք կարողանում լուծել այդ հանելուկները, սկսում ես ծաղրել. ասա մեզ, ինչ է քո միտքը և որտեղ փնտռենք այն...

—Անխելք մարդ,—ասաց կեանքը հեգնելով։

Այդ րոպէին Բարոզզինը տեսաւ՝ թէ ինչպէս փայլեց կեանքի աչքերում մի խորին տանջանք։

— Ինչո՞վ եմ ես մեղաւոր, քանի որ այդ բոլորի մէջ ինքդ ես մեղաւորը... շարունակեց կեանքը։—Ես գիտեմ, դու նրա համար ես անում այդ բոլորը, որպէսզի քեզ, քո աչքերում արդարացնես... Դու վախկոտ ես. վախենում ես այն բոլոր միմեանց հակառակ մտքերի արտայայտութիւնը գծելու քո նկարիդ աչքերում, որոնք դու ես ստեղծել։ Հէնց դու՛ պատրաստեցիր այն շղթան, որի մէջ հեծում ես, որովհետև այդ շղթաներում է պարունակդ։ Իմ մէջ չկան՝ ոչ սէր, ոչ ատելութիւն. ոչ ճշմարտութիւն, ոչ ստութիւն. ոչ բարութիւն, ոչ չարութիւն. ոչ գիտութիւն և ոչ էլ տգիտութիւն... Իմ մէջ չկայ տանջանք. Իմ մէջ կայ միայն զուարճութիւն, և հէնց այդ զուարճութիւնն է, որ կոչւում է կեանք։

(*«Журналъ для всѣхъ» № 2.1902,

կովկասեան երկաթուղու 376-րդ վերստի վրայ գծի պահապան Բաքիր-Ցաւօղլի տեսնում է գծի վրայ մի քանի անծանօթ մարդիկ. ձայն է տալիս նրանց և պատասխան չստանալով, ձեռքի փողն ածելով երկիւղի նշան է տալիս, որից յետոյ չարագործները սկսում են փախչել. Թէև պահապանը նրանց ետևից հրացան է պարպում, բայց, ըստ երևոյթին, ոչոքի չի վիրաւորում, առաւելեւս հրացանի ձայնի վրայ եկած ստրաժնիկները չարագործներից ոչ մէկին չեն կարողանում բռնել։ Գիծը գիտելուց յետոյ, տեսնում են, որ չարագործները քանդել են երկաթագծերի երեք կապ։

—Օգոստոսի 4-ին, գիշերուայ ժամը 11-ին, անդրկովկասեան երկաթուղու 422 րդ վերստի վրայ գծի պահապանը կանգնեցնել տուեց №161 ապրանքակիր գնացքը այն պատճառով, որ վեց չարագործներ փչացրել էին գիծը գնացքը խորտակելու դիտաւորութեամբ։ Չարագործներից ոչ ոք բռնուած չէ։

—Կովկասի շերամապահական կայանի ասիստենտ պ. Իւանով ուղարկւում է արտասահման ուսումնասիրելու համար բուրդը, մետաքսը և ուրիշ նըման նիւթեղէնները չխունացող ներկերով ներկելու արհեստը։

— Սեպտեմբերի 4-ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակուած է Թիֆլիսի Տափի-թաղի Ս. Գէորգ եկեղեցու նախկին երէցփոխ Կարապետ Ջալալեանի դատը, որը մեղադրւում է յիշեալ եկեղեցու փողերը վատնելու համար։

— Մտադրութիւն կայ առաջիկայ տարուանից Թիֆլիսում բանալ գիւղական կալուածական բանկի բաժանմունք։

—Մոսկուայի հնագիտական Կայսերական ընկերութեան անդամ Ա. Մ. Զաւալսկի այս ամառ ընկերութեան յանձնարարութեամբ գալիս է Կովկաս հընագիտական հետախուզութիւններ կատարելու համար։

—Դր. Զանշեանի գերեզմանի վրայ, Մոսկուայում, մահարձան է կանգնեցւած, որի բացումը նշանակուած է սեպտեմբերի 3-ին։

—Սեպտեմբերին ձեռնարկուելու է հողային աշխատանքներին Երևանի երկաթուղու Ուլուխանլու կայարանից մինչև Ջուլֆա երկաթուղի անցկացնելու համար։

—Մի խումբ երիտասարդ նկարիչներ Պետերբուրգից ճանապարհուել են դէպի Կովկաս և Թուրքստան տեղական զանազան վայրեր նկարելու համար։

—Մեծ Բրիտանիայի հպատակ լորդ Օսբորն Բոկլերհ և իւր ուղեկից Բէլէյ Ուարինգտան այս ամսին գալիս են Կովկաս որս անելու համար։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՂՈՒԲԱՅԻՑ.—Օգոստոսի երկուսին գիշերը տեղս ժամանեց Բագուի նահանգապետ գեներալ Օգինեցը։

—Ամառն անձրևային անցաւ. մրգեղէնի սաստիկ առատութիւն է, բացի խնձորից. նոյնպէս շատ առատ էր արտերի բերքը։

* * *

ՂԱՅԱԲԱՃՈՒՑ (Նուխուվին.).—Յունիսի 23-ին, գիշերուայ ժամը 12-ին, ղայաբաշեցի մի ոմն իւր որդու յետ կալում քնած է լինում. սկսում է սաստիկ անձրև տեղալ, որի ժամանակ կայծակը խփում է հօր և որդու միջև գետնին, և գետինը 3 արշնաչափ երկարութեամբ ու 2 վերշոկ խորութեամբ պատւում է։ Այրւում են հօր և որդու տներն ու ձեռները. իսկ հագուստները կարծես գիտմամբ դանակով կտրտւում են։

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆ

«Մուրհանդակ»-ը հրատարակում է ի Տէր հանգուցեալ Տ. Տ. Մելքիսեդեկ սրբազանի մասին կենսագրական ընդարձակ ուսումնասիրութիւն, որից առաջ ենք բերում հետևեալ կտորը.

Պոլսոյ մէջ գլխաւորաբար երկու սերունդ կայ որ լաւ կը ճանչնայ Մելքիսեդեկ Սրբազանը. նախ անոնք որ 1865ին հանրային պաշտօնի մէջ կը գտնուէին և որոնց սակաւաթիւ ներկայացուցիչները միայն կան հիմայ, եւ երկրորդ անոնք որ 1885ին հրապարակի վրայ դեր մը ունէին իբրեւ ժողովական եւ իբրեւ խմբագիր, և Կաթողիկոսական անցքերու մէջ ճանչցան Մելքիսեդեկ Սրբազանը։ Երկու թուականներուն մէջ 20 տարուան տարբերութիւն մը կայ. սակայն այդ միջոցին բոլորովին տարբեր դէմքով եւ վիճակով կը ներկայանայ։ 1865 ին սիլինար գլխարկով, սև պանգուր մազերով ու մօրուքով Գ. Գարեգին Մուրատեանը՝ 20 տարի վերջ կը գտնենք սպիտակ մօրուքով, վեհ երևոյթով ընտեալ Կաթողիկոս մը, որ եկած է գտնել անկիւն մը իւր յոգնած գլուխը և վշտացած սիրտը հանգչեցնելու համար։ 1865-ին, Գ. Գարեգին, տակաւին նոր դէմք մը Պոլսեցիներու համար, կը ծանօթանայ իր մտաւոր և հրապարակային դասախօսութիւններով, մանաւանդ Պարտիզակի սովին առթիւ խօսած իմաստալից բանախօսութեամբը, իսկ 20 տարի վերջը իր կրօնական քարոզներով կրթական բեմբասացութիւններով կը տիրէ իր ունկնդիրներու սրտին։

Այս 20 տարուան միջոցին, իր ամենէն արդիւնալից գործերէն մէկը եղած էր, ինչպէս ակնարկեցինք երէկ, Եւդոկիա կատարած ուղևորութիւնը՝ իբրև նուիրակ Ս. Երուսաղէմի։ Այն ատեն տեղերը ուր հանդիպած էր Մելքիսեդեկ Վ., քարոզելով և հրահանգելով, նշանակելի ազդեցութիւն մը յառաջ բերած էր, մանաւանդ օտարագիրներու վրայ։ Ամէնէն աւելի ազդուած էր Թրանսիլվանիոյ Հայերուն հոգևոր վիճակէն, որուն վրայ կը խօսէր յաճախ, ցաւելով դիտելով որ կացութիւնը նոյն է այսօր 30 տարի յետոյ, և այդ ժողովրդեան ներկայացուցիչներն ալ հետզհետէ կը պակսին այլասերուած օտար սերունդ մը ձգելով իրենց ետին, որոնք ոչինչ գիտեն իրենց եկեղեցական աւանդութիւններէն և իրենց մայրենի լեզուէն։

Երուսաղէմի հանգուցեալ Եսայի Պատրիարքը, հակառակ իր զարգացման անբաւականութեան, ուսումնասէր եկեղեցական մըն էր. ինքը գըլխաւոր գնահատողը եղաւ Գ. Գարեգին Մուրատեանցի արժանիքին, և առաջին անգամ, հակառակ վանքի անձուկ պիւտճէին 10 ոսկի ամսական յատկացուց իրեն։ Գ. Գարեգին վանքին հացը ձրի ուտող կամ այդ վիճակը շահագործողներէն չէր։ Մէկ կողմէն Սիոնի մէջ կրօնական և բանասիրական յօդուածներ կը գրէր, որոնցմէ մէկն է «Խաչ օգնեա ինձ» խորագրով այնքան հոգեգրաւ մէկ ատենաբանը, և միւս կողմէ կը դասախօսէր ժառանգաւորներուն. այս միջոցին հեղինակելով նաև Հին Կտակարանի և մանաւանդ Հայ. Եկեղեցւոյ պատմութիւնը, որուն յառաջաբանին մէջ այնքան գեղեցիկ կերպով բացատրուած է Եկեղեցւոյ ոգին։ Սակայն վանքին պիւտճէն հետզհետէ կանձկանար և Եսայի Պատրիարք կը դժուարանար վճարել 10 ոսկի սահմանեալ թոշակը. ուստի հընարք մը պէտք էր և Եսայի Պատրիարք յաջողեցաւ Գ. Գարեգինը ձեռնադրել վարդապետ, այս կերպով ամսաթոշակը կէս առ կէս զեղչելով, քանի որ այլևս արտաքին չէր իր պաշտօնը այլ իբրև միաբանի գործ էր և միաբանական ամէն իրաւունք պիտի վայելէր։ Սակայն Մելքիսեդեկ Վ.-ի այնքան աշխատութեանց փոխարէն վճարեալ հինգ ոսկի թոշակն ալ միաբանական շրջանակներու մէջ դժգոհութիւն և շշուկ պատճառած էր, և այս եղաւ սկզբնապատճառ որ միջոց մը վերջ Մելքիսեդեկ Վ.՝ Բարխուդարեան Մակար Վ. ի և Կյօմիւրճեան Մովսէս Վ. ի հետ հեռացաւ միաբանութենէն։

Վանքը զրկուեցաւ կարող ձեռքերէ, սակայն գործ ու պաշտօն չէր պակսեր Մելքիսեդեկ Վ.ի համար։ Պոլսոյ մէջ ինք արդէն իբրև լուրջ և ուսեալ եկեղեցական լաւ համբաւ մը ունէր և իր քարոզները ախորժով կըլսուէին. քարոզելու համար շատ նպաստաւոր չէին իր ձայնն ու ձևերը, սակայն հըմտութիւն և պարզութիւն կար իր խօսածին մէջ. շատ լաւ գիտէր իր միտքը բացատրել, երբ մանաւանդ նիւթը կը վերաբերէր աւետարանի ոգին և իմաստը բացատրելու։ Ամփոփ խօսքերու մէջ կըխտացնէր երկար բացատրութիւններ և ասիկա իր գլխաւոր արժանիքներէն մէկն էր։ Տարիներ յետոյ երբ Զմիւռնիայէ վերադարձին կոչուեցաւ Գատըքէօյի քարոզչութեան, ամենք իր նախկին կորովէն և խօսելու կարողութենէն շատ բան պակսած կըգտնէին, և այս ալ սխալ չէր բոլորովին, որովհետև մէկ կողմէ իր յառաջացած տարիքը և միւս կողմէ իր կրած բարոյական վիշտերը այնքան ազդած էին իր սրտին, որ շատ օրեր մտածկոտ և մելամաղձոտ երեւոյթ մը ունէր, և իր խուցին առանձնութեան մէջ հազիւ կըփափուէր տեսակցելով բարեկամի մը հետ, ուրկէ կըծածկէր իր ներքին յուզումը, սակայն իր պարզած սկզբունքներն և գաղափարները կըմատնէին թէ զըսպուած ցաւ մը կար իր մէջ, որ կը շարշարէր իր միտքը և կը սպառէր իր սիրտը։

Այս տպաւորութեան տակ բնական էր որ իր բոլոր խօսածները հաւասարապէս չգնահատուէին. սակայն անուրանալի էր թէ խօսողը հմուտ մէկն էր, Հայ. Եկեղեցւոյ վարդապետ, բառին ամբողջական նշանակութեամբ։

Տասնեակ տարիներու պանդխտութենէն ի Պոլիս, հաճելի շրջան մը չեղաւ իրեն համար։ Հակառակ Գատըքէօյի ամէն դասակարգի անձերու իրեն նըկատմամբ ունեցած յարգանքին և նիւթական գոհացուցիչ պայմաններու, իր բոլոր բաղձանքն էր առանձնանալ վանքի մէջ։ Երուսաղէմէն հեռու մնալու պատճառներ ունէր, ինչպէս պիտի բացատրենք յառաջիկային. ուստի կը խորհէր երթալ իր ծննդավայրը Տաւուշ կամ Կըպչաքի Ս. Մակարայ վանքը. իսկ ամենէն վերջ կըփափաքէր երթալ Սիս, երբ Աթոռը ունենար իր պետը, և հոն ուսում տարածելով զբաղիլ. Կիլիկեցիք քանիցս առաջարկեցին իրեն. ուղղակի եւ անուղղակի, ընդունիլ Կաթողիկոսական պաշտօնը և այդ հանգամանքով գործել. սակայն Մելքիսեդեկ Սրբազան կը զգար թէ իրեն համար դադրած է այլ եւ գործնական կեանք, պատասխանատուութիւն ստանձնելու վիճակը. ուստի կը հրաժարէր շարունակ, խոստանալով սակայն աջակցիլ ապագայ Կաթողիկոսին. եւ երբ Տ. Սահակ Սրբազան բարձրացաւ կաթողիկոսութեան Աթոռը, մեծ էր իր ուրախութիւնը. սակայն քայքայումը սկսած էր այլ ևս իր ֆիզիքական վիճակին մէջ։

1898ի աշնան հեռագիրը հաղորդեց թէ Տ. Մելքիսեդեկ Սրբազան ընտրուած է Առաջնորդ Զմիւռնիոյ եւ կը հրաւիրուի դարձեալ հոն ուրկէ հեռու կը մնար 11 տարիէ ի վեր։ Այդ հեռագիրէն մէկ երկու շաբաթ առաջ Պոլիս եկող իր բարեկամները հաղորդած էին իրեն՝ հանրային տրամադրութիւնը, բայց Մելքիսեդեկ Սրբազան միշտ կը խնդրէր հեռու պահել զինքը այդ պաշտօնէն։ Սակայն Գաւառ. Ժողովը այս անգամ վճռական կերպով իր կամքը կը յայտնէ, և ինք չուարած կը մնար. բարեկամները խնդրեցին իրմէ երթալ իր ժողովրդեան քով, որոնց պաշտելի եպիսկոպոսն էր եւ այս կերպով ինքզինքը փոխել։ Գատըքէօյի քարոզչութիւնը որքան ալ նպաստաւոր պայմաններով շըջապատեալ ըլլար, իրեն յարմար պաշտօն չէր վերջապէս, և իր խուցի մէջ փակուած կեանքը քիչ ժամանակէն պիտի վերջանար տխուր պարագաներու մէջ։

Ես ամեն բան շնորհեցի ձեզ, մարդկանցդ, որպէսզի բաղդաւոր լինիք։ Ես տուի ձեզ՝ երկինք և երկիր, արեգակ և օդ, օր և գիշեր, լոյս և խաւար, բաժանեցի ձեզ երկու սեռի, ձեր սըրտերում ձգտումն դրի դէպի գիտութիւնը և այսպիսով ամբողջ բնութիւնը ձգեցի ձեր իշխանութեան տակ և ինչու՞ համար էր այս բոլորը... Նրա՞ համար, որպէսզի դուք իմ զուարճութեամբ յագենայիք... բայց դուք ինչպէս վարուեցիք իմ պարգևներիս հետ... դուք լցրիք երկինք և երկիր ձեր ուրուականներով և հանգիստ խղճով նըրանց ձեր ճորտերը դարձրիք։ Դուք ճորտ էք հոգով և կամենում էք մարդկանց ձեր ճորտերը դարձնել։ Ագահնե՜ր... երկիրն իւր հարստութիւններով բաժանեցիք ձեր մէջ, և եթէ ձեռքներից ճար լինէր, կբաժանէիք նոյն իսկ երկինքը և օդը։ Դուք կամենում էք յաւիտենակից դառնալ և դրա համար էլ անխղճաբար ոչնչացնում էք միմեանց։ Ճշմարտութիւն էք որոնում, բայց ինքներդ էք խճճւում ստութեան խիտ ցանցի մէջ... Խե՜ղճ ստրուկներ... Զուարճութեան այն բուռն և անսանձ ծարաւն է, որը կազմում է ձեր տանջանքների աղբիւրը։

Կեանքի աչքերն այրւում էին բարկութեան բոցով։

—Սպասի՛ր, դու ինքդ քեզ հակասում ես,-ասաց Բարոզգինը։—Չէ որ դու ինքդ դրիր մեր սրտերի մէջ զուարճութեան ձգտումն... դու ինքդ մեզ միջոց տուիր հասնել կեանքի մէջ կատարելութեան. և հէնց այդ է պատճառը, որ մարդիկ ոչինչ չեն խնայում հասնելու իրենց նպատակին։

—Ինչու՞ ես բազմակողմանի կեանքը նմանեցնում կատարեալ զուարճութեան—ասաց կեանքը։—Ծնւում էք հողի մի փոքրիկ կտորի վրայ ապրելիս. արեգակից և օդից պատսպարուելու համար շրջապատում էք ձեզ քարերով, փայտով և երկաթով. ուտում էք ագահաբար պատառելու չափ, խմում էք մինչև յիմարութեան հասնելը, այնքան էք բազմանում, որ մինչև իսկ ձեր ուժերն էլ էք պակասեցնում, սիրահարւում էք զանազան արհեստական ձայների և ներկերի վրայ, խաբւում, շողոքորթում և բարկանալու ժամանակ էլ սկսում էք միմեանց խեղդել... Միթէ դուք այս բոլորը անուանում էք զուարճութիւն և լիակատար կեանք...

Այդ բոլորին չար, հեգնական մի արտայայտութիւն էր երևում կեանքի աչքերում։

—Եւ այս բոլորը կատարում էք նրա համար,—շարունակեց կեանքը—որովհետև պարգևներն առատութեամբ լըցուած են ձեր առաջ... Ի հարկէ կանէք, որովհետև տեսնում էք ձեր առաջ թէ լայն տարածութիւն, օդ, թէ արև, թէ մաքուր և վճիտ ջրեր և թէ վերջապէս այդքան արհեստական հրաշալի ձայներ ու ներկեր... Եթէ ծնւում, ապրում և մեռնում էք շարշարանքների մէջ, այդ բոլոր դէպքերում էլ ինքներդ էք մեղաւորը,—ասաց կեանքը և նրա աչքերը փայլեցին բարկութեան, արհամարհանքի և խղճահարութեան արտայայտութեամբ։

Բարոզգինին երևաց, իբրև թէ մահուան տկլոր և փայլուն գանգը, որը նայում էր կեանքի ուսերից, գլխով արեց, ի հաստատութիւն այդ բանի։

— Քո ասածները ճիշտ են, բայց ոչ բոլորովին,—ասաց Բարոզգինը.—ճիշտ է, մենք մեր ձգտումներով մեզ վրայ իշխողներ ստեղծեցինք, բայց այժմ կռւում ենք նրանց դէմ և քիչ-քիչ ազատւում նրանց լծից... Մենք ձգտում ենք ուղղուել... բայց և այնպէս դու ես մեղաւոր, որ մենք այնքան քարքարուտներով դիմեցինք դէպի ճշմարտութիւնը... դու մեզ թողիր կռուի մէջ անօգնական մեզ շրջապատող դերակշիռ ուժերի և անհասկանալի հանելուկների դէմ, և մենք գերի ընկանք դրանց ձեռքը։

— Բաւական է... քո մեղադրանքները զզուեցրին ինձ... Ստութիւն և գանգատ... ահա այն գծերը, որոնցով ճանաչում եմ ձեզ, գերիներիդ։ Դուք կռուի դուրս եկաք աւելի զինուած, քան միւս բոլոր ստեղծուած կենդանի արարածները։ Ես ձեզ տուի կռուի մէջ երեք գլխաւոր զէնքեր՝ ա) հասարակական բնազդ, բ) բանականութիւն և գ) կամք։ Առաջինով դուք պիտի միանայիք միմեանց հետ և կազմէիք մի միութիւն և մեծ ոյժ, երկրորդը պիտի որոշէր ձեր բաղդը, իսկ երրորդի ազդեցութեամբ պիտի ճակատագրին աւելի լաւ ձև տայիք։ Եւ դո՛ւք, մարդիկդ, ինչպէս վարուեցիք այդ զէնքերի հետ։ Դուք ինքներդ բըթացրիք ձեր զէնքերը և այժմ անզէն մնալով լալիս էք։ Դուք միացաք, բայց ոչ իբրև ազատներ, այլ գերիներ։ Դուք էլ էք ճորտեր, նրանք էլ. միայն այն զանազանութեամբ, որ նրանք հրամայողներ են, իսկ դուք կատարողներ։ Դո՛ւք գերիներդ, որ մշտական ահի ու սարսափի մէջ էք ապրում, միմեանց մորթելու համար մետաղեայ զէնքերի գործածութեան վրայ էք մտածում և կեանքի ոչնչացնողներին, իմ խաղերը հանգցնողներին, գլուխ էք իջեցնում որպէս աստուածների։ Որպէս ճորտեր հրաժարուեցիք դուք ձեր կամքից և ձեր բարբարոսների հրամանները կատարեցիք... Սով, հիւանդութիւն և մահ—ահա ձեր կարապետները... Դու ճշմարտութեան մասին էլ խօսեցիր... բայց ճշմարտութիւնը կարող է գոյութիւն ունենալ միենոյն իրաւունքների տէրերի և միմեանց հաւասար ոյժերի մէջ. իսկ ճորտերի և հրամայողների մէջ ճշմարտութեան մասին չպէտք է անգամ մտածել

Կեանքի աչքերը սառն էին և սուր, որպէս պողպատ։

— Անգութ ես դու կեանք, և... և իրաւացի—ասաց։—Միթէ դու չգիտես, որ մենք ոչ թէ մտածում էինք միայն մեր սխալ գործերի մասին... Այո՛, ուղիղ է... մարդկութիւնը շատ քայլեց կեղծութեան ճանապարհով... Բայց այժ՛մ... այժմ ո՛չ... մենք այժմ խարոյկը հանգցնողներին, չենք անուանում մեծ, այլ նրանց, որոնք օգնեցին մեզ յաղթել բնական ոյժերը և ծառայեցնել մեր օգտին. նրանց, որոնք խորամուխ եղան բնութեան գաղտնիքների մէջ. նրանց, որոնք հեռացրին մեր միջից մեզ խեղդող մարդկային ուրուականները. նրանց, որոնք փարատում են մեր ցաւերը. նրանց, որոնք թեթևացնում են մեր ծանրութիւնները, և վերջապէս այն քարոզիչներին, որոնք քարոզում են յաւիտենական աշխարհի, սիրոյ և իրաւացիութեան մասին... Մենք կամենում ենք այժմ վերականգնել եղբայրութեան, հաւասարութեան և ազատութեան գաղափարները. շղթաներն էլ միշտ շառաչելով թափւում են մեր պարանոցներից և շուտո՜վ, շուտո՛վ կգայ ժամը, երբ...

— Հա՛, հա՛, հա՛—ընդհատեց նրան կեանքը ծիծաղելով,—երբոր կգայ... ճորտի խղճալի խօսքերը... Չապաւնի, բայց կամենալ, միշտ կամենալ է պէտք... հաստատուն և ուժեղ կամք—այդ է բոլորը... միայն նա կարող է կարող է ձեզ տալ այն, ինչ որ կամենում էք... Բայց ո՞ւր է ձեր կամքը... ո՞րտեղ թագցրիք իմ տուած այն ուժեղ կամքը...

— Մեր կամքը... մեր կամքը կամբանայ... պատասխանեց Բարոզգինը.—մենք այնքան տանջուեցինք, որ այժմ բուռն ցանկութեամբ բաղդաւորութիւն ենք կամենում... բայց դու գիտե՞ս, որքան ցանկութիւնը շատ լինի, այնքան էլ կամքն է ամուր և ցանկացածը մօտ։

Բարոզգինը տեսաւ թէ ինչպէս փայլեցին կեանքի աչքերը մի հրաշալի փայլով և նա սկսեց համարձակ և աշխուժով նայել Փոնի այն մասին, որտեղ ընկել էր պատուհանից ներս ցոլացած լուսնոյ մոխրագոյն շողը։ Այդ րոպէին նա գեղեցիկ, հանգիստ և հաստատուն էր, իսկ խարոյկը բոցավառւում էր նրա ոտքերի մօտ։

— Ահա՛, ահա՛... ահա թէ ինչպէս պիտի լինին կեանքի աչքերը,—ասաց Բարոզգինը և վազեց դէպի նկարը։

— Այդ ինչ է Նիկոլայ Միխայլովիչ... քիչ մնաց ինձ վայր ձգէիք... քիչ մնաց հրդեհ գցէիք տան մէջ, որից դու հաշէիր ազատուել։Այս ինչ է, այսքան ջնջոցներ և թղթեր էք ցրուել այստեղ,—մրթմրթաց պառաւ տանտիկինը, դնելով սեղանի վրայ վառած լամպարը։

Բայց Բարոզգինը մինչև անգամ չըլսեց պառաւի մրթմրթոցը, որովհետև զբաղուած էր իւր նկարի աչքերով։

Նա այժմ իմացաւ, թէ ինչպէս պիտի լինին կեանքի աչքերը։

Վ. Իսկեանդարեան.

Մելքիսեդեկ սրբազան տեղ՝ տալով եղած խնդրանաց, մանաւանդ հետեւելով իր սկզբունքին թէ եպիսկոպոս մը ցմահ պաշտելու պէտք է մնայ իր թեմին, ցորչափ հոգւոր վերին պաշտօն մը չի բաժներ զինքը իր հօտէն, մեկնեցաւ Զմիւռնիա։ Սակայն դժբախտաբար բոլորովին յուսախաբ եղած էր այս անգամ, որովհետեւ գործոց ձեռքեր կըպակսէին իր շուրջը. և իր բարեկամներէն շատեր հրաժեշտ տուած էին աշխարհի։ Իր առաջին առաջնորդութեան օրով, 15—20 տարի առաջ յաջողեր էր տեղացի երեւելիներու մէջ գժտութիւնները բառնալ և քաղաքը օժտել հիւանդանոցով ու դպրոցներով, սակայն այս անգամ փոխանակ նոր շինութիւններու, ազգային կալուածները կըքայքայուէին և անտուկն ալ մեծագումար պարտքի տակ կըմնար։

Բայց իր մէկ քանի բարեկամներէն, որոնցմէ Պալեօզեան էֆ.ի եղբայրն մահը խորապէս ազդեց իր վրայ, ուրիշներ անտարբեր էին կացութեան առջև. ինք ալ նախկին կորովը չունէր այլեւս, որպէսզի այդ ցրուեալ կարողութիւնները ի մի ամփոփէր, ու երբեմն երևան ելած ճիգերը հուսկ յետոյ կըզգալէին, առանց օգուտ մը արտադրելու մանաւանդ զարման մը տանելու կացութեան, որ օրէ օր ընդգալի կը դառնար Ն. սրբազնութեան տկարութեան և անկարողութեան յառաջխաղացութեամբը։

Երկար ատեն առաջնորդարանի ժողովները անկերպարան վիճակ մը ունէին. ոչ ժողովականները առաջնորդը կը փնտռէին և ոչ ալ առաջնորդը ժողովականները, և Տ. Մելքիսեդեկ Սրբազան պատարագելու, քարոզելու, հանդէսներու նախագահելու կարողութիւն ալ կը կորսնցնէր։ Տ. Յակոբ Ա. Չուգ եպսկ. Եգիպտոսէ դարձին, պահ մը Զմիւռնիոյ մէջ կարեւոր օժանդակ մը եղաւ իրեն՝ հոգևոր գործոց տեսակէտով, որովհետեւ գիտէր մօտէն անոր տրամադրութիւնները, և առանց վիրաւորելու զինքը կը կատարէր ձեռնադրութիւններ, պատարագներ և նախագահութիւններ միշտ առաջնորդին թոյլտուութեամբ։ Տ. Յակոբ եպսկ. է վերջ մէկ քանի վարդապետներ անցան Զմիւռնիայէն, սակայն ամէնէն ալ դժգոհ մնացած էր ինքը. իր ըմբռնումներուն մանաւանդ խստապահանջ տրամադրութիւններուն անհամապատասխան կը գտնէր ընթացքը այդ վարդապետներուն, որոնք ժողովրդականութիւն շահելու համար իրեն անհաճոյ փորձեր կընէին։ Օգնականի մը պէտք զգալի էր սակայն, բայց պաշտօնական անձեր չէին ուզեր վիշտ պատճառել իրեն, ուղղակի իրենք կարգելով այդ օգնականը, ու Մելքիսեդեկ Սրբազան այդ ընտրութիւնը չէր կատարեր, որովհետեւ իր միակ ընտրելին էր այդ պաշտօնին Տ. Յակոբոս Վ. Ճահպազեան (իր նախորդ առաջնորդութեան օրով Մանիսայի քարոզիչը, այժմ նոյն պաշտօնով Նէնիրքէօյ), որուն անդ փոխանորդութեան դժուարութիւններուն առջև ուրիշ ընտրելիի վրայ խորհելու պէտք չէր տեսներ, քանի որ անտուկին նիւթական վիճակն ալ այնքան անձկացած էր որ իր ամսաթոշակներն իսկ կը գիզուէին, թէպէտ ինք դրամական խնդիր և հաշիւ չունէր ամենևին, և զատ ծովն ու երբեմն չըգտածովն իսկ կը գոհանար, տալով ապացոյցը իր կատարեալ վեհանձնութեան։ Սակայն այս հանգամանքներուն մէջ կարելի չէր օգնական ալ պահել։

Ահաւասիկ այս վիճակին մէջ և քանի չաբաթուան դժնդակ հիւանդութենէ յետոյ հոգին աւանդեց Մելքիսեդեկ Սրբազան, իր կորստեան յառաջ բերած վշտին հետ։ Զմիւռնիացիները իրենց Առաջնորդ մը գտնելու դժուարութեան առջև գտնուելով. դժուարութիւն որ աւելի զգալի պիտի դառնայ, երբ օրուան տպաւորութիւնը անցնի, և յետոյ յարմարագոյն Առաջնորդը գտնելու փորձ ըլլայ։

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Երէկ հաղորդել էինք մի քանի ռուսական լրագրների կարծիքները Ռոստկովսկու սպանման առիթով։ Ահա թէ ինչ է ասում «С. П. ВѢд.» միևնոյն տխուր անցքի մասին.

Ո՞ւմ մեղադրել։

Հիւպատոսի [illegible] կառքի վրայ փողոցներից անցած ժամանակ չառ-չառերն ու գնդակներ արձակել, և եթէ հնարաւորութիւն լինէր, փրկիչքական ամենափոքրիկ հնարաւորութիւն,—քաղաքը ամբողջ թող բնակչութեան գնդակներ պէտք է արձակէր։

Եթէ հնարաւորութիւն լինէր, երևի, ամբողջ Թիւրքիան պատրաստ կլինէր գնդակ արձակելու։

Ուրեմն, հարկաւոր է պատժել ամբողջ Թիւրքիան։

Լրագիրը, գտնելով որ Ռուսիան պարտաւոր է դէպի Թիւրքիան մինչև այժմ ունեցած իւր քաղաքականութիւնը փոխել, շարունակում է.

Այն, ինչ որ մենք (ռուսները) կարգադրում էինք ձեռք բերել մինչև ռուսահիւպատոսների գնդակի բաւուելը, երբէք չպէտք է համեմատել այն հրամանների հետ, որոնք ռուս կառավարութիւնը պէտք է տայ այդ անլուր լժգժական դէպքերից յետոյ։

Ամեն բանից առաջ Թիւրքիան պէտք է լուրջ կերպով երաշխաւորի ռուսական ներկայացուցիչների անձնաւորութիւնը, բայց որովհետև նա իւր տրամադրութեան տակ չունի այդպիսի երաշխաւորութիւն, բայց որովհետև նա ոչինչ չի կարող ներկայացնել, բացի ստաջոդ խոստումներից ու անիմաստ խօսքերից, ուստի ռուսները իրաւունք չունենք,—ասում է լրագիրը,—կրկին և կրկին վտանգի ենթարկելու ռուս հողի հաւատարիմ զաւակների կեանքը։ Ռուս կառավարութիւնը ինքը անձամբ պէտք է պահպանի նրանց կեանքը։

Թէ ինչ եղանակով անել այդ,—անշուշտ, դժուար է կարճ ժամանակի ընթացքում որոշել։ Հարկաւոր է համաձայնութիւն կայացնել միւս պետութիւնների հետ և ամենքից առաջ պէտք է Գերմանիայի յամառութիւնը կամ լռութիւնը կամ ամենախաղաղ տրամադրութեամբ երբէք էլ կոպտութիւն չտալ նրան։ Այդ տեսութեան հայեացքը ոչ միայն հաւանական է, այլ և պատմական անհրաժեշտութիւն է ներկայանում. Բալկաններում մեր կատարելիք դերը չափից աւելի է ենթարկուած նրա շահերին՝ ի վնաս մեր զարգացման, ուստի դժուար թէ նա համաձայնի մեր քաղաքականութեան յանկարծակի սուր փոփոխութեան։ Իսկ եթէ հարկ կլինի խնդիրը բացարձակ կերպով դնել և կամ եթէ իրերի ոյժը մեզ կքաշի դէպի նրա վերջնական լուծումը,—այն ժամանակ՝ փառք Աստուծոյ։

Վաղուց արդէն Սուրբ Սոֆիան ռուսական խաչի կարօտն է քաշում, որը կարող կլինի սրբավայրը պաշտպանել Մահմեդականների կիտրուէթիւնների և վաճառուած յոյների սնարժան ձեռնձգութիւնների դէմ, իսկ սլաւոնական ժողովուրդները կանգնած են ճանապարհի վրայ, խփել է արդէն վերջին, տասներկուերորդ ժամը և հարկաւոր է այլևս ընտրութիւն կատարել ռուսական վահանի հովանու տակ հանգստացող ազատ եղբայրակից ազգութիւնների հզօր դաշնակցութեան և համայն-գերմանական ալիքի առաջ խոնարհելու միջև, ալիք, որ փրփրել է, արդէն սպառնալիքներ է կարդում, որը վաղը պէտք է ողողէ ու խեղդէ ամեն բան։

ՌՈՍՏԿՈՎՍԿՈՒ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Հեռագրներից արդէն յայտնի է, թէ ռուսաց կառավարութիւնն ինչ հատուցումներ է պահանջում թիւրքաց կառավարութիւնից իւր Բիթոլիայի հիւպատոս Ռոստկովսկու սպանութեան համար և Սևաստոպոլից մի նաւախումբ է ուղարկել ծովային ցոյց անելու համար ի դէպս, թէ Թիւրքիան չկամենայ այդ հատուցումները տալ։

«Նով. Վր.»-ն հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում այն մասին, ինչպէս է վարուել նման մի դէպքում Գերմանիան։

1876 թուի մայիսի 6-ին սպանուեց Սելանիկի գերմանական հիւպատոս Աբբոտը։ Մայիսի 15-ին Սելանիկ հասաւ գերմանական «Medusa» մարտանաւը։ Մայիսի 16-ին վեց հոգի, որոնք մասնակցել էին հիւպատոսի սպանութեան, կախուեցին եւրոպական հիւպատոսների և մարտանաւերի նաւաստիների ներկայութեամբ։ «Medusa»-ի ետեւից եկաւ «Komet» մարտանաւը, իսկ յունիսի 25-ին վրայ հասաւ փոխ-ծովակալ Բատշի հրամանատարութեան տակ զրահաւոր մի նաւախումբ, որը բաղկացած էր հինգ մարտանաւից։

Բացի մայիսի 16-ին կախուած վեց յանցաւորներից, դարձեալ վեց հոգի դատապարտուեցին մահուան պատժի, երեքը—ցմահ տաժանակիր աշխատանքների, երկուսը—նոյնպիսի աշխատանքների տասն տարի, 11 հոգի հինգ տարի, մէկը—երեք տարի, երեքը—մի ամիս ժամանակով, մի հոգի դատապարտուեց երեք տարուայ աքսորի և մի երեխայ—մարմնական պատժի։ Սելանիկի ոստիկանապետը դատապարտուեց 15 տարուայ բանտարկութեան, թիւրքական մարտանաւի հրամանատարը, որը միջոցներ ձեռք չէր առել հիւպատոսների պաշտպանութեան համար, դատապարտուեց բանտարկութեան 10 տարի ժամանակով, իսկ տեղական զօրքի հրամանատարը—երեք տարի ժամանակով։ Սելանիկի ընդհանուր-նահանգապետ Մոհամեդ-Րիֆաաթ-փաշան դատապարտուեց մի տարուայ բանտարկութեան, զրկուելով պետական ծառայութիւն մտնելու իրաւունքից։ Սպանուած հիւպատոս Աբբոտի այրին, որ զաւակներ չունէր, ստացաւ 300,000 ֆր. վարձատրութիւն, իսկ ֆրանսիական հիւպատոս Մուլէնի կինն ու որդիքը—600,000 ֆր. վարձատրութիւն։ (Ինչպէս յայտնի է, Ռոստկովսկու այրուն առաջարկուած է 400,000 ֆր., բայց նա մերժել է)։

—

Լրագրները պատմական հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում այն մասին, թէ երբ և եւրոպական ինչ հիւպատոսներ են սպանուած Թիւրքիայում։

Մինչև XIX դարը մինչև անգամ մեծ պետութիւնների դեսպանները Կ. Պոլսում ապահովուած չէին, թէ իրենց կեանքը վտանգից զերծ է։ Թիւրքիայի պատերազմը եւրոպական պետութիւնների հետ սովորաբար սկսւում էր այն բանից յետոյ, երբ թուրքերը բանտում և բանտ էին ձգում եւրոպական դեսպաններին, սոսկալի չարչարանքների ենթարկելով նրանց։

XIX դարում թուրքերը հանգիստ թողին դեսպաններին և զբաղուեցին հիւպատոսներով։

Անցած դարի 50-ական թուականներին ֆրանսիան հիւպատոսութիւն հիմնեց Պրիզրէնում։ Դա առաջին հիւպատոսութիւնն էր Հին Սերբիայում։ Ֆրանսիական հիւպատոսը գնաց Պրիզրէն, բայց չկարողացաւ երկու ամսից աւելի մնալ այնտեղ։ Թուրքերն ու ալբանացիները շարունակ վիրաւորում, վախեցնում և սպառնում էին սպանել նրան։ Այս պատճառով ֆրանսիան փակեց այդ հիւպատոսութիւնը, և մինչև 1889 թուականն եւրոպական ոչ մի պետութիւն իւր ներկայացուցիչը չունէր այնտեղ։

1860 թուին Սկադրայում սպանուեց յունաց հիւպատոսը և վիրաւորուեց աւստրիա-ունգարական հիւպատոսն այն միջոցին, երբ նրանք զբօսնում էին փողոցում։

1876 թուին սպանուեցին միանգամից երկու հիւպատոս—ֆրանսիականը և գերմանականը։

1889 թուին Սերբիան առաջինն էր, որ ֆրանսիական հիւպատոսարանի փակումից յետոյ (1850 թ.), Պրիզրէնում հիմնեց իւր հիւպատոսութիւնը։ Հիւպատոս էր նշանակուած Լուկա Մարինկովիչ, որին վիճակուած չէր երկար ժամանակ վարել հիւպատոսական գործերը։ Մի քանի ամսից յետոյ նա սպանուեց մի ալբանացու ձեռքով շուկայում։ Սպանուեց նրա համար, որ նա առաջինն էր, որ Կոսովոյի դաշտում ծածանեց սերբիական հիւպատոսական դրօշակը 500 տարուայ (1389—1889) սարկութիւնից յետոյ։

Բաղդաւոր չէին նաև նրա յաջորդները։ Թոդոր Ստանկովիչ (1891 թ.) և Սիմա Աւրամովիչ (1893 թ.) հիւպատոսները յաճախ ենթարկւում էին ալբանացիների և թուրքերի յարձակման։ 1894 թուին Պրիզրէնում սերբիական հիւպատոս էր Իւան Իւանիչ։ Մի գիշեր [illegible] յարձակուեցին նրա տան վրայ, բայց կաւասները յետ մղեցին նրանց։

1898 թուին թուրքերը Ուսքիւբում վիրաւորեցին հիւպատոս Նաստաս Նաստասիևիչին։

Մի տարուց յետոյ, 1899 թ., Սելանիկի սերբիական հիւպատոս Պաւէլ Դենիչը քարկոծ եղաւ։

Միևնոյն տարում յարձակման ենթարկուեց Դեբրայում Ուսքիւբի ռուս հիւպատոս Մաշկովը։ (Ի դէպ. Մակեդոնիայում ներկայումս մնացել է ռուսաց հիւպատոսներից միայն այս հիւպատոսը)։ Նա գնում էր Մօնաստիր, շրջապատուած ալբանացի պահապան զինուորներով։ Երբ հասաւ Դեբրա, նրա վրայ յարձակւում զօրուեց նրան սպանելու նպատակով։ Մաշկովն ազատուեց միայն իւր քաջութեան և այն բանի շնորհիւ, որ շուտով թրքական մի զօրախումբ հասաւ նրան օգնութեան։

1900 թուի ամառը թուրքերի յարձակման ենթարկուեցին Ուսքիւբի ռուսաց և անգլիական հիւպատոսների կանայք։

1901 թուին Մօնաստիրի մօտ թուրք զինուորների յարձակման ենթարկուեց ֆրանսիական հիւպատոս Մարք Ձարլը։ Նրան վայր ձգեցին ձիուց և սարսափելի ջարդ տուին։

1903 թ. մարտ ամսին Միտրովիցայում սպանուեց ռուսաց հիւպատոս Շչերբինան, իսկ նոյն տարուայ յուլիսի 26-ին Մօնաստիրում ռուսաց հիւպատոս Ռոստկովսկին։

—

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, թէ սուլթանը մտադիր է պրինց Ահմեդի առաջնորդութեամբ մի յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ Ռոստկովսկու սպանութեան համար ներողութիւն խնդրելու Թագաւոր Կայսրից, ինչպէս պատգամաւորութիւն չինական վերջին խռովութիւնների ժամանակ ուղարկեց բողդիխանը Բերլին գերմանական դեսպան Կետտելերի սպանութեան առթիւ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Բուլղարական կիսապաշտօնական «Българск. Търгов. Вѣстн.» թերթում Կիւստենդիլից հեռագրում են հետևեալը.

«Թիւրք քաղաքական, ոստիկանական իշխանութիւնների և զօրքի կատարած անասելի ու հակամարդկային արարքների ու խժդժութիւնների պատճառով մակեդոնական քրիստոնեայ ժողովրդները, Մակեդոնիայից ստացուած վերջին տեղեկութիւնների համաձայն, յուլիսի 20-ին յայտարարել են ընդհանուր ապստամբութիւն։ Զէնք կրելու կարող բոլոր տղամարդիկ. մտել են ապստամբների շարքերը և անօրինակ քաջութեամբ կռւում են սուլթան Աբդուլ-Համիդի ասիական վայրենաբարոյ գնդերի դէմ։ Ծերերը, կանայք և երեխաները քաշուել են լեռը, իսկ առողջ և աշխատութեան կարող մակեդոնական կանայք՝ բոլոր կանանց նման՝ ամեն բանի մէջ օգնում են յուսահատաբար կռուող ապստամբներին»։

«Дневникъ» հաղորդում է, որ յայտարարուած բուլղարական ապստամբութիւնը տարածուել է Բիթոլիայի, Ռեսէնի, Օխրիդի, Դեբրեանսկի, Կիչևի, Պորեչի, Դեմիր-Հիսարի, Պրիլէպի, Կրուշևի, Կոստուրսկի, Լերինսկի, Կայլեարսկի և ուրիշ շատ կազաներում. Ապստամբութեան պաշտօնապէս յայտարարութեան երկրորդ օրը, Բիթոլիայի շրջականերում տեղի է ունեցել արիւնահեղ ճակատամարտ թիւրք զօրքերի ու ապստամբների խմբի միջև, որ բաղկացած է եղել ոտքից մինչև գլուխ զինուած 150 ապստամբներից։ Այդ կռուի մէջ թիւրքերը կորցրել են 50 հոգի և ունեցել 90 վիրաւոր։

—

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։

«Белград Новине»-ին Բիթոլիայից հեռագրում են.

«Ապստամբական երեք խումբ յարձակուեցին Կրուշևօ քաղաքի վրայ և ուժանակի ռումբերով օդը հանեցին տեղական ակցիզի և քաղաքային իշխանութիւնների շէնքերը, նմանապէս և հրդեհեցին շատ մահմեդականների ու քրիստոնեաների տներ։ Այդ տների փլատակների տակ մնացել են մեծ թուով մարդիկ։

«Բիթոլիայի նահանգի ամբողջ տարածութեան վրայ երևացել են բազմաթիւ ապստամբական հրոսակախմբեր, մանաւորապէս նրանք մեծ թիւ են կազմում Լերինսկ և Կոստուրսկ գաւառներում. Նահանգի մէջ հաղորդակցութեան բոլոր միջոցները խափանուած են։ Վաճառական դասը չի համարձակւում փողոց դուրս գալ, իսկ կառավարական պաշտօնեաները քաղաքից հեռանում են ժանդարմերի ուղեկցութեամբ միայն։ Բիթոլիայի նահանգում տիրող վիճակը խիստ լուրջ ու կրիտիքական է, և ոչ ոք չգիտէ, թէ ինչեր կպատահեն ամենամօտ ապագայում»։

—

ՊԻՈՍ X-ՐԴ ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Աւստրիական «Wiener Polit Gorr» թերթը հաղորդում է Սարտօ կարդինալի ընտրութեան նախընթաց կոնկլաւի մասին միքանի հետաքրքրական մանրամասնութիւններ։ Այդ մանրամասնութիւնները նոր լոյս են սփռում այն պատճառների վրայ, որոնք առաջ են բերել Վենետիկի պատրիարքի թեկնածութիւնը։ «Այլ ևս ոչ մի տարակոյս չի մնում,—նկատում է աւստրիական թերթի թղթակիցը,—որ Սարտօ կարդինալի թեկնածութիւնը առաջ է քշուել, ինչպէս այդ շատ դէպքերում պատահել է, ոչ Ռամպոլլայի կուսակիցների, այլ նրա հակառակորդների կողմից։ Սարտոյի ընտրութիւնը Ռամպոլլայի հակառակորդների յաղթանակը պէտք է համարել։ Վատիկանի նախկին աւագ քարտուղարի օգտին առաջին քուէարկութիւնների ժամանակ ձայն են տուել բոլոր ֆրանսիական և սպանիական կարդինալները։ Ռամպոլլան գուցէ և կարողանար յաղթանակը տանել, վերջ ի վերջոյ, թէև ճշմարիտ է նաև այս հանգամանքը, որ նա ոչ մի քուէարկութեան ժամանակ երեսունից աւելի ձայն չէ ստացել։ Ռամպոլլայի հակառակորդները, նկատելով որ ձայները բաժանւում են, առաջ են [illegible] մի անձի թեկնածութիւն, որը շահելով հանգուցեալ նախկին քարտուղարի բոլոր հակառակորդների ձայները, կարող էր նաև նրա կուսակիցների համակրութիւնն էլ վաստակել։ Այսպիսով մէջ է բերւում Վենետիկի պատրիարքի թեկնածութիւնը, որ մի կողմից համապատասխան լինելով զուտ եկեղեցու իդէալներին, միւս կողմից, ռամպոլլեաններին աչքում լինէր դիւանագիտական հարցերի վերաբերութեամբ չզիջանող ու անտարբեր։ Այդ հիմքերը առաջնորդեցին այն բանին, որ Սարտօ Կարդինալը կարողացաւ շահել աւստրիական, ունգարական և գերմանական կարդինալների քուէները, որոնք առաջ տուել էին յօգուտ Գոտտի Կարդինալի։ Բացի դրանցից, նրան ձայն տուին նաև ֆրանսիական կարդինալները և իտալականի այն մասը՝ որը առաջ աշխատել էր յօգուտ Ռամպոլլայի։ Այս ամենի հետևանքը եղաւ այն, որ Սարտօն ստացաւ 50 ձայն, այսինքն, 4 ձայն աւելի, քան Լևոն XIII-րդը նախորդ կոնկլաւում։

—

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Մակեդոնական ապստամբութեան գլուխը կանգնած է չորս մարդ. Բորիս Սարաֆով, Դամեան Գրուև, Պերօ Տոշև և Լոզանով։

Առաջինը վաղուց ի վեր արդէն գրաւում է մակեդոնական յեղափոխական կեանքի մէջ և մանաւանդ աւելի յայտնի եղաւ վերջին տարիներս և Սելանիկի վերջին գործողութիւնների ժամանակ։

Գրուևը ծնած է Մօնաստիրում։ Նա իր կրթութիւնը ստացել է Սելանիկի բուլղարական գիմնազիայում, իսկ յետոյ շարունակել է Սոֆիայի բարձրագոյն ուսումնարանում։ Նա վարել է ուսուցչական պաշտօն Ուսքիւբում, Պրիլէպում, Սելանիկում և Մօնաստիրում։ Յեղափոխական շարժումների պարագլուխ հանգուցեալ Դէլչևի և Գեորգի Պետրովի ամենամօտ բարեկամն ու գործակիցը լինելով, նա ձերբակալուեց 1899 թ., երկու տարի բանտ նստեց, յետոյ աքսորուեց Փոքր-Ասիա և 1902 թ. եղած ընդհանուր ներման ժամանակ ազատութիւն ստանալով, վերադարձաւ Մակեդոնիա։ 32 տարեկան է նաև լի եռանդով։ [illegible] ընտանիք իւր ամբողջ կեանքը նուիրել է ազգային յեղափոխութեան գործին և անհագին ժողովրդականութիւն ունի բուլղար հասարակութեան մէջ։ Պերօ Տոշևը նոյնպէս ուսուցիչ է։ Նա ծնուել է Պրիլէպում և ուսումը ստացել է Սելանիկում ու Սոֆիայում։ Նա 38 տարեկան է։ Սելանիկի ուսումնարանների ընդհանուր վերատեսուչ էր, երբ կալանաւորուեց և աքսոր ուղարկուեց։ Աքսորից ազատուեց դարձեալ վերջին ընդհանուր ներման ժամանակ։ Թէև տկար կազմուածքի տէր և սաստիկ ջղային, բայց և այնպէս, մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան ստեղծողներից մինն է նա, որ և մինչև այսօր գործում է նոյն դրօշակի տակ։

Լոզանովը բոլորովին դեռ ևս երիտասարդ է. 30 տարեկան հազիւ է, արհեստով լուսանկարիչ և չի ստացել ոչ մի կրթութիւն։ Վեց-եօթը տարի է, որ նա գտնւում է յեղափոխական շըրջանի մէջ և կազմակերպութեան ամենանշանաւոր խմբապետներից մէկն է։

Հրոսակախմբերը ունեն 35 հազարի չափ հրացան, որոնցից 25 հազարը 150 հազարը փամփուշտի հետ արդէն գտնւում է ապստամբական խմբերի տրամադրութեան տակ։ Բացի դրանցից, ասւում է, թէ ունեն 3500 կիլոգրամ ուժանակ։ Ապստամբների ընդհանուր թիւը հաշւում են 25000 հոգի, որոնցից 10.000-ը ներկայումս գրաւած է Մոնաստիրի նահանգում։ Մակեդոնական ապստամբների շարքերում բացի բուլղարներից, կան նմանապէս և քրիստոնեայ այլազգիներ, վալախներ մինչև իսկ սերբեր։

ԷՄԲԵՐՆԵՐԻ ԴԱՏԸ

«Մեր ժամանակի այս ամենամեծ խարդախների» դատը սկսուեց Պարիզում օգոստոսի 8-ին (ն. տ.) երդուեալների պալատում։

Հասարակաց կարծիքն ինչպէս Ֆրանսիայում, այնպէս և արտասահմանում խիստ հետաքրքրուած է այս դատով։ Դատավարութեանը ներկայ են ֆրանսիական և արտասահմանի մամուլի կողմից 120 թղթակից։ Հասարակութիւնը նիստի դահլիճը ներս է թողնւում տոմսակներով։ Հասարակութեան մեծ մասը կազմում են, ի հարկէ, կանայք։

Մեղադրեալները չորս հոգի են. 1) Թերեզա Էմբեր, ծնունդով Դորինեակ, 47 տարեկան. 2) Ֆրեդերիկ Էմբեր, նրա ամուսինը, որդի ֆրանսիական արդարադատութեան նախկին մինիստր Գուստաւ Էմբերի, 45 տարեկան 3) Ռոմէն Դորինեակ, Թերեզայի եղբայրը, 45 տարեկան. 4) Էմիլ Դորինեակ, Թերեզայի միւս եղբայրը, 49 տարեկան։

Ի նկատի ունենալով Թերեզա Էմբերի խանգարուած առողջութիւնը, դատական իշխանութեան առողջութիւնը, դատական իշխանութիւնը թոյլ է տուել նրան նստել ոչ թէ մեղադրեալների նստարանի վրայ այլ առանձին կակուղ բազկաթոռի վրայ։

Կանչուած է 106 վկայ։ Էմբերներին պաշտպանում են Զոլայի հռչակաւոր փաստաբան Լաբորի և Կլիւնէ։

Կարդացւում է մեղադրական արձանագրութիւնը։ Թերեզա Էմբերը և նրա գործակիցները մեղադրւում են գլխաւորապէս հետևեալ խարդախութիւնների համար։

1881 թուին Էմբեր ամուսինները (Թերեզա և Ֆրեդերիկը) սկսեցին լուր տարածել, թէ իրենք ստանալու են, 100 միլիոնի մի հսկայական ժառանգութիւն։ Ֆրեդերիկ Էմբերի հայրը, որ այն ժամանակ արդարադատութեան մինիստր էր, իր պաշտօնակից-մինիստրներին պատմում էր, թէ իր հարսին՝ Թերեզային մի հարուստ պորտուգալացի ահագին հարստութիւն է կտակել։ Նոյն Գուստաւ Էմբերն ասում էր, թէ այդ ժառանգութեան հաշիւների մէջ 600,000 ֆրանկի մի «փոքրիկ» սխալ է սպրդել։ Դարձեալ նոյն Գուստաւն ասել էր մի անգամ, թէ «ժամանակաւորապէս» դրամական նեղութեան մէջ է, որովհետև որդուն «հարկաւոր է եկել մօտ 1.000,000 ֆրանկ վճարելու» համար ստացուած ահագին ժառանգութեան պետական տուրքերը։

1883 թուին ժառանգութեան վերաբերեալ առասպելները մի քիչ փոխեցին. կտակող պորտուգալացին դարձաւ ամերիկացի։ Այդ ամերիկացու անունն իբրթէ Կրաուֆորդ էր և դա Թերեզա Էմբերին իբրթէ կտակել էր 100,000,000 ֆրանկ, բայց դժբաղդաբար իբրթէ երևան էին եկել երկու մրցակից—կտակողի եղբօր որդիները Ռոբերտ և Հենրի անուններով։ Այս վերջիններիս կողմից զանազան նոտարներ և փաստաբաններ զանազան դատարաններում, մինչև բարձրագոյն ատեանները, դատ էին վարում Էմբերների հետ ժառանգական իրաւունքի մասին։ Թերեզա Էմբերն իր տան մէջ դրել էր երկաթեայ մի դրամարկղ և պատմում էր, թէ Կրաուֆորդի կտակած 1000,000,000-ը փակուած է այդ դրամարկղի մէջ։ Ոչոք իրաւունք չունէր այդ դրամարկղը բանալու, որովհետև աշխարհիս մէջ գոյութիւն չունեցող Ռոբերտ Հենրին իրենց փաստաբանների միջոցով դատական կնիք դրել նրա վրայ։ Կնիքը պիտի վերցուէր և դրամարկղը պիտի բացուէր դատը վերջանալուց յետոյ միայն։ Իսկ դատը ձգձգւում էր տարիներ։

Ամենքն արդէն հաւատում էին, որ հաշակաւոր 100 միլիոնը գոյութիւն ունի, և Թերեզայ Էմբերն առանց դժուարութեան մեծ փողեր էր ձեռք բերում մասնաւոր անձերից և բանկերից, նոյն իսկ օտարերկրեայ բանկերից ժառանգական դատը շարունակելու և ֆրանսական զանազան ձեռնարկութիւնների համար։ Նա Պարիզում հիմնել էր, ի միջի այլոց, ակցիոներական ապահովագրական ընկերութիւն՝ «La Rente Viadere» 10. 000,000 ֆրանկ դրամագլխով։ Այդ ձեռնարկութիւնը զուգէ ծաղկէր, բայց 1902 թուին Պարիզում սկսեցին յամառ լուրեր շրջել, թէ ոչ մի Կրաուֆորդ չըկայ, հետևաբար և չկայ 100, 000, 000 Էմբերների դրամարկղի մէջ։ 1902 թուին, պարտատէրների պահանջմամբ, դատարանը վճռեց բանալ այդ դրամարկղը Էմբերները չքացան Պարիզից Դրամարկղը բաց արին և տեսան, որ մէջը կայ...վարտիկի մի կոճակ միայն։ Երկար որոնումներից յետոյ Էմբերներն բռնուեցան Մադրիդում և ձերբակալուելով տարուան Պարիզ 1902 թ. մայիսին,

Նրանք այլևս չեն մեղադրւում կեղծ կտակ կազմելու համար, որովհետև անցել է 10 տարուայ վաղեմութիւնը, այլ մեղադրւում են այն բոլոր խարդախութիւնների համար, որ գործել են 1892 թ. մայիս ամսից յետոյ ինչպէս մասնաւոր անձերի, այնպէս և պետական հաստատութիւնների վերաբերմամբ, և նրանց համար պիտի գործադրուի ֆրանսիական քրէական օրէնսդրութեան 147-րդ յօդուածը, որի զօրութեամբ յանցաւորները բանտարկութեան են դատապարտւում ոչ այնքան երկար ժամանակով։

Մեղադրականի ընթերցման ժամանակ Ֆրեդերիկ Էմբերը և երկու Դորինեակները նստած էին խիստ հանգիստ։ Իսկ Թերեզա Էմբերը, «մեծ խարդախների» պարագլուխը, խիստ անհանգիստ էր. նա յաճախ ընդհատում էր մեղադրականի ընթերցումը զանազան նկատողութիւններով և առարկութիւններով։ Դատարանի նախագահը կարգի էր հրաւիրում նրան և սպառնում էր, որ եթէ չլռէ, կը հրամայի հեռացնել նիստի դահլիճից։

Այնուհետև Թերեզա Էմբերը, մեծ ապլոմբով պատասխանելով նախագահի զանազան հարցմունքներին, խիստ ծիծաղ պատճառեց հասարակութեանը, —ժպտացին նոյն իսկ արդարադատութեան ներկայացուցիչները,—երբ նա վճռապէս յայտարարեց, թէ Հենրի և Ռոբերտ Կրաուֆորդները գոյութիւն ունին, թէ ինքը, Թերեզան, ունեցել է և ունի ազնիւ դիտաւորութիւններ և թէ ինքը կվճարի ժամանակով իր բոլոր պարտքերը (70. 000, 000 ֆրանկ)։ Թերեզան սկսեց խիստ յանդիմանութիւններ ուղղել ֆրանսիական արդարադատութեան ներկայ մինիստր Բալլէի հասցէին, որն իբրթէ իր ապօրինի կարգադրութիւններով կործանել է նրա շատ միլիոններ արժեցող ձեռնարկութիւնները։

Նախագահը նորից, բայց մեծ զգուշութեամբ, խնդրեց նրան լռել։

Սրանով վերջացաւ առաջին նիստը։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ 5 օգոստոսի

Վեքսելի կուրսը երեք ամսով.	
Լոնդոնի վրայ . համար	93,75
Բերլինի » 100 մարկի	
Պարիզի » 100 ֆրանկի »	37,32$^{1}/_{2}$
Վեքսելի կուրսը չէքերով	
Լոնդոնի վրայ.	94,40
Բերլինի »	46,30
Պարիզի »	37,60
Բորսային զեղչառը	5—6$^{1}/_{2}$%
4% պետական ռենտը. . . .	98$^{3}/_{4}$
4% պետական փոխառութ. . .	100$^{3}/_{4}$
4$^{1}/_{2}$% ներքին փոխ. 1893 թ. . .	—
4% գրաւաթղ. պետ. ազն.	105$^{1}/_{8}$
կալ. բանկի	95
5% ներք. խաղ. փոխ. 1864 թ.	446$^{1}/_{2}$
5% ներք. խաղ. փոխ. 1866	339$^{1}/_{2}$
5% խաղ. գր. պետ. ազն. կալ. բանկի	286
5% օբլ» Թ.-Փ. քաղ. վարկ. ընկ.	96
6% Քութայիսի կալ.	101
4$^{1}/_{2}$%» » »	
$^{1}/_{2}$ » Բաքուի »	3
Ակցիաներ Բաքուի Նաւթ. ընկ.	—
» Կասպիան »	3325
» Մանթաշեան և ընկ.	193
Փայեր եղբ. Նոբել »	
Ակցիաներ » » »	475

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶԻ ԲԵՐԴԱԹԱՂԻ

Դպրոցների համար հարկաւոր են ուսուցիչներ կամ ուսուցչուհիներ կրօնի հայոց լեզուի, ռուսերէնի, ֆրանսերէնի (6 դաս), թւաբանութեան, ընդհանուր պատմութեան ու աշխարհագրութեան են։ Իւրաքանչիւրը կունենայ 24 դաս հերթական վերակացութեամբ։ Դասագին—առաջնակարգ առարկաների համար տասը թուման, իսկ երկրորդականների՝ ութ թուման, ճանապարհածախսերին 30 թուման յաւելում։ Դիմել Թաւրիզ տեսուչ Ալէքսանեանին։

(215) 2—1

Всякій

можетъ заработать легко и честно до 400 руб. мѣсячно, безъ особыхъ знаній, и расходовъ. Посылайте только скорѣй Вашъ адресъ на U 113 an das

Annoncen-Bureau des Merkur
in Mannheim, Meerfeldstrasse 44.

(211) 50—5

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ !

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿՆԵՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
դեղագործ
Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մանրը, որից այլուածքը դեղին բծերը, եղունգների բշտիկները և ազդում է անլորդ քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդիւզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ։

Մի կտորի գինը 50 կ. կտորի 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ։ Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկւայում
№17815 24—15

Ղօշավանքի «ՏԱՅԼԱՐ» անուանուած 600 դեսեատին վարելահողերը և արօտատեղերը կապալով տալու համար ամսիս 7-ին նշանակուած աճուրդը և 9-ին կրկնաճուրդը չկայանալու պատճառով, Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան Ատեանում նշանակուած է առաջիկայ Օգոստոսի 26-ին, առաւօտեան ժամը 12-ին նոր ԱՃՈՒՐԴ և 28-ին ԿՐԿՆԱՃՈՒՐԴ, նոյն հողերը կապալով տալու համար։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ատենիս ամենայն օր։

Անդամ Հոգևոր Կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան

(214) 9—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

կամենալով ունենալ դատարկ գետիններ կամ խոշոր բակեր դարսելու համար շինարարական նիւթեր փողոցները քարելու և նորոգելու համար, հրաւիրում է այդպիսի գետիններ և բակեր ունեցողներին այդ մասին իրենց յայտարարութիւնները տալ փողոցները նորից քարելու համար կազմուած յանձնաժողովի նախագահի անունով ոչ ուշ սոյն օգոստոսի 20-ից։

Գլխաւոր պայմանները, որոնց պիտի գոհացում տան նիւթեղէնը դարսելու համար առաջարկուած տեղերը, հետևեալներն են.

1) Ազատ բակի կամ դատարկ գետնի տարածութիւնը պէտք է լինի ոչ պակաս, քան 300 քառ. սաժ., ցանկալի է, որ լինի մինչև 600 ք. ս.

2) Նիւթեղէնը դարսելու համար տեղեր են հարկաւոր ոստիկանական VI քաղաքամասում, ոստիկանական I քաղաքամասում (Վերայի շրջանում). ոստիկանական VI քաղ.—ցանկալի է, որ մօտիկ լինի Վարանցովեան խճուղուն. Դիդուբէում (երկաթուղու կայարանին կամ անդրկովկասեան երկաթուղու գծի մօտ). Հաւլաբարում (Կախեթեան խճուղուն մօտիկ կամ հէնց երկաթուղու գծի մօտ). ոստիկանական V քաղաքամասում։

3.) Նիւթեղէնը դարսելու տեղերը պէտք է շրջապատուած լինեն բարեայ պարսպով և պէտք է ունենան պահապանի բուդկա դռների մօտ և մի սենեակ խահանոցով նիւթեղէնը դարսողի համար։

4) Վարձման ժամանակամիջոցն է 3—տարի. վարձը վճարւում է կէս տարին մի անգամ առաջուց։

5) 3-րդ կէտը պարտաւոր չէ, որովհետև 3—5 տարուայ ժամանակամիջոցում շինութիւնները կարող է կանգնացնել քաղաքային վարչութիւնը վարձի հաշուին։

(217) 2—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԹԻՖԼԻՍ, ԼԵՐՄՈՆՏՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ №9

Ցանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար ուսման ընթացքն աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ՝ թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին՝ Ս. Մանուէլեանցին։ Աւարտողներն ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւններն սկսուելու են սեպտեմբերի 1-ից. Կուրսերի ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ձրիաբար կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу.

188 12—4

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնւող

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունուած է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4$^{1}/_{2}$ ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թւաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թւաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Րեմինգտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրուած համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատուել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրուած է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5 մինչև 7երեկ.։ Պարապմունքները սկսւում են 1903 թուի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրւում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրուած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. №46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկւում է ձրի։

Վերևում յիշուած ձեռնարկը ծախւում է Ռուսիայի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3ր. 50 կոպէկ։

(216) 20—1

Дозволено ценз. -7го августа, 1903 г. Տպարան Վերէյչև և Կամենմախեր Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. № 852